

անոնց կիներուն մոյնքը կ'ընէր այնքան տարբեր, կեդրոնական, մա'նաւանդ Արեւմտեան Եւրոպայի դիմային կերպարանքէն, ըլլալով նոյն ատեն թանձրագոյն հեշտանքի ոստայն, ինչպէս նրբագոյն երազի շղարշ մը, մատաղ աղջիկները հանդերձելով դէպի հզօր տարփանքները, ուր մանկամարդ կիները տանելով հողին քաղցր պարզութեան: Իզպան, որ իր կարգին խորան մըն էր թշուառութեան ու ամէնէն սրտայոյզ պարկեշտութեան, ժուժկալութեան ու տապանա'կ չարքաչ համակրանքի: Ու հոգեկան փաղաղիչ գեղեցկութիւնները, զգայնութեան անհաւասարելի հարստութիւնը, սիրտի մեծ գեղումները, որոնք ուս վէպը կ'ընեն այնքան տարբեր, տարաշխարհիկ, թո'ւնդ, աւելի զգլխիչ, քան Արեւմուտքին բոլոր բուրումները միասին: Անցեր են երեսունէ աւելի տարիներ այդ օրերու Մոսկուայէն: Ռուս հոգին ի'նչ դժոխքներ ստիպուեցաւ կոխկրտել ու որքա'ն արիւն ես տեսայ, որ կ'աւելնար հովուերգական սա հոգենկարին վրայ: Այդ ժողովուրդը, որ Եւրոպան ազատեր էր թուրքէն, կարծես վարձատրուելու համար այդ բարեպաշտութեան հաշուոյն, գրեթէ դարուկէս հալածուեցաւ Արեւմուտքէն: Եղան տարիներ, ուր իր բանակները, հալածական, հալեցան իրենք իրենցմէ: Ճափոնական պարտութիւն: 1914ին պատերազմին հաշուեկշիռը: 1941ի աղէտը... Յարերը, որոնք կը փշրուէին: Ռուս ժողովո'ւրդը, որ ահա նոր աշխարհի առաջին ճարտարապետը: 1900ին ասոնք պատանիի մը մտքին վրայ արձակելի փայլակներ չէին անշուշտ: Բայց ծանօթ էի 1825ին սկիզբ առնող հսկայ ալ շարժումին, որ պիտի յանգէր իր լրումին... 1917ին:

Մաթիկ Մելիքիսանեանց ուսուցիչական դպրոցին մէջ յօրինուած մէկն էր: Անիկա այդ մըկրտութիւնը պատմեց մանրամասն: Կը գոհանամ հիմնական գիծերով: Այդ Մոսկուային մէջ ան ինքզինքը վարձակալ ըրաւ դասական մանսարդիւն, որմէ յաճախ-